ՆՈՐ-ԴԱՐ

№ 224 ՏԱՍՆԵԻԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 21 Դեկտեմբերի 1895 Հինգշաբթի 21 Դեկտեմբերի ՏԱՍՆԵԻԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 224

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով՝ 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ի մինչեւ 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով Յայտարարութիւնների գառին 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ

ՄԻՔԱՅԵԼ և ԼԻԶԱ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆՆԵՐԸ, ՏԻԳՐԱՆ և ԳԷՈՐԳ ՄԱՆՈՒԿԼԵԱՆՆԵՐԸ *խորին վշտով յայտարարում են առաջին երկուսը իրենց դստեր, երրորդը իւր ամուսնու, չորրորդը իւր եղբօր կնոջ*

ՔԱԼԻԱ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ ՄԱՆՈՒԿԼԵԱՆԻ

անակնկալ մահը և խնդրում են իրենց ազգականներին ու բարեկամներին շնորհ բերել թաղման տխուր հանդէսին՝ Մարմինը դուրս կբերուի հանգուցեալի բնակարանից (Հաւլաբար, Կախեթինսկայա փողոց, Շաքրո Մարտիրոսեանի տուն, №49) և կրատարուի ս. Էջմիածնեցւոց եկեղեցին, այսօր, Հինգշաբթի, դեկտեմբերի 21-ին, առաւօտեան ժամը 10-ին: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդող.—Միաքը և ըղգացումները:

Քրոնիկոն.—Կայսերական Տան և Վեհ. Կաթողիկոսի հեռագրներ: Հայ գաղթականների: Պարսից զօրքերը և քիւրդերը: Խաչի ընկերութիւն: Հայ ոտանաւորների անգլերէն թարգմանութիւն: Առևտր. և մանուֆակտուրայի մանաժողովի հեռագիրը ֆինանսական: Վարակիչ հիւանդութիւններ: Կիրակնօրեայ առևտուր: Կարսի երկաթուղին: Ներկայացումն հայ կանանց ընկ. օգտին: Նոր տիպի միջնակարգ դպրոց: Ուսում. մանաժողովի ծանուցումն: Ռուսական բանկի բաժանմունքներ: Խօջայեանի նուէր: Շուշուց: Նոր հրատարակութիւններ:

Մի հայ բժշկուհի Վենայում:

Քաղաքական. — Վերջին տեղեկութիւնները Թիւրքիայի գործերի մասին: Անգլիա:

Հեռագրներ:

Թեր և դէմ:

Բանասիրական.—Հայ կինը:

Տեղեկատու:

Յայտարարութիւններ:

Թիֆլիս, 20 դեկտ., 1895 թ.

ՄԻՏՔԸ ԵՒ ԶԳԱՑՈՒՄՆԵՐԸ

—

Քաղաքակրթուղ հասարակութեան համար պարբերական մամուլը մի անհրաժեշտ գործօն է: Կարելի է համարձակ ասել, որ եւրոպական այժմեան քաղաքակրթութիւնը առանց պարբերական մամուլի աներևակայելի է. մեծ է պարբերական մամուլի ազդեցութիւնը և ընդարձակ նրա տիրապետութեան սահմանները:

Որովհետև մի ազգի յառաջադիմութիւնը, բարօրութիւնը, կարելի է ասել, բաղդը պայմանաւորուած ենք համարում գլխաւորապէս նրա մէջ յայտնուող մտքերի և զգացումների բռնած ընթացքով, այդ պատճառով պարբերական մամուլի կարդինալ պատասխանութիւնը, սուրբ կոչումն ճանաչում ենք մշակել ժողովրդի մըտքերն ու զգացումները:

Մեր խօսքը վերաբերում է առաջնորդող և ոչ թէ առաջնորդուող մամուլին:

Մտքի և զգացումների մշակութեան գործը աղօղութեամբ առաջ տանելու համար, ամենից առաջ անհրաժեշտ է, որ մենք միտքը և զգացմունքը չշփոթենք միմեանց հետ, այլ իւրաքանչիւրն իրեն հասանելի տեղը տանք: Այնտեղ՝ որտեղ մարդկային ուղեղը և սիրտը միասին իրենց դերերը պէտք է կատարեն, մէկը առանց միւսի՝ գործի խափանումն է. միտքը առանց զգացումների տակր է և անզօր, իսկ զգացումները առանց կառավարող մտքի կործանման են տանում:

Ահա ձեզ ծովի վրայ շոգենաւը. նրա սիրտը շոգին է, նրա միտքը՝ ղեկը: Ո՞ւր կարող է հասցնել ղեկը նաւին առանց շոգու, և ինչ է սպասում միմիայն շոգիով գործող նաւին. նոյնիսկ խաղաղ ծովի վրայ նաւը կորստեան է մատնուած, այնինչ, եթէ շոգին իւր տեղում, իսկ ղեկը իւր տեղում կանոնաւոր գործելիս լինէին, նաւը ալեկոծ ծովի վրայ իսկ աջողութեամբ կարող էր հասնել նաւահանգիստ:

Կարելի է ուրեմն երևակայել այն հասարակութեան դրութիւնը, որի միտքը շփոթուած է և տըկար... և վայ այն հասարակութեան, որի զգացումներն անմշակ են և վայրենացած, իսկ դրանց ղեկավարող միտքը բացակայում է:

Այսպէս մտքի և զգացումների մշակութեան կարևորութիւնն ըմբռնելով և իմանալով թէ ինչ մեծ դեր է կատարում պարբերական մամուլը ազգերի քաղաքակրթութեան գործում, կարելի է գալ այն ուղիղ եզրակացութեան, որ պարբերական մամուլը թէ կարող է մշակել ժողովրդի միտքը, կըրթել նրա զգացումները և թէ շըփոթել միտքը, ապականել նրա զգացումները:

Առաջին դէպքում մամուլը դէպի լոյս է առաջնորդում, վերջին դէպքում՝ դէպի խաւար:

Խօսենք մտքի մշակութեան մասին, որի հետ և սերտ կապուած է զգացումների մշակութիւնը:

Ի՞նչպէս պէտք է մշակել միտքը:

Պէտք է սովորեցնել մարդուն, որ ինքը իւր ուղեղով մտածէ, պէտք է մարդուն դատողութեան վարժեցնել: Սա ամենահասարակ միջոցն է, որի մասին բազմիցս մենք առիթ ենք ունեցել խօսելու:

Երբ պարբերական մամուլը սովորեցնում է ընթերցողին մըտածել և իւր սեպհական դատողութեամբ գալ որոշ եզրակացութեան, այդ դէպքում մամուլը մտքի մշակութեան գործն է առաջ տանում,

Իսկ երբ մամուլը ամեն միջոց գործ է դնում, որպէսզի ընթերցողն իւր ուղեղով չմտածէ, որովհետև ինքն է նրա փոխարէն մտածում, և նրան չէ թոյլ տալիս, որ սեպհական դատողութեամբ հասնէ լուծիքական որոշ եզրակացութեան, այդ դէպքում մամուլը շփոթում է միտքը:

Երբ մենք ասում ենք, որ այս ինչ մարդը այսպիսի կազմուածք ունի, մենք մի առ մի ցոյց ենք տալիս նրա դէմքի գծագրութիւնը, հասակի չափը... և թողնում ենք, որ ընթերցողն ինքը գտնէ թէ այդ մարդը գեղեցիկ է թէ տգեղ, բարձրահասակ է թէ կարճահասակ, այդտեղ մենք վարժեցնում ենք ընթերցողին սեպհական դատողութիւն ունենալ, այդտեղ մտքի մշակութեան գործն ենք առաջ տանում:

Իսկ երբ մենք ասում ենք, որ այսինչ մարդը գեղեցիկ է, երկնային է նրա դէմքը, ամենքն էլ այդ գիտեն, ամենքն էլ այդ կըխոստովանեն, այդ ասում է և Կիրակոսը (իսկ Կիրակոսի մասին արդէն մենք նոյն կերպ վաղուց խօսել ենք) և ով կըհամարձակուի մեր ասածին հակառակը պնդել... և ուրիշ էլ ոչինչ չենք ասում: Այդ դէպքում, ակներև է, որ մենք ընթերցողի միտքն ենք շփոթում, նրան չենք թողնում որ իւր սեպհական ուղեղով մտածէ և չենք թողնում, որ նա դատողութեան վարժուի:

Միշտ առողջ մտքի և առողջ դատողութեան կողմը լինելով, «Նոր-Դար»-ը անընդհատ կռիւ է մղել այն մամուլի դէմ, որ մտքերը շփոթելով է իւր գոյութիւնը պահպանում:

Մտքերի շփոթութեան հետեւանքը կորստաբեր է եղել և կըլինի ամենքի համար, մի հասարակութիւն է նա, թէ մի ամբողջ ազգ: Մտքերի շփոթութիւնից առաջ է գալիս մտաւոր սնանկութիւն և զգացումների ապականութիւն: Իսկ մտաւոր սնանկութեան և զգացումների ապականութեան մէջոցին հանդէս են գալիս նոր ժամանակի քուրմերը, որոնք կաւէ կամ պղնձէ ամաններ, որոնց մէջ նրանք գիշերները իրենց ոտներն են լուանում, առաւօտները դըրանց շուրջը մոմեր վառում, խունկ ծխում և կեղծաւորութեամբ ու փարիսեցիութեամբ ծունը դնելով՝ փառաբանութեան երգեր են երգում այդ կաւէ և պղնձէ կուռքերի առաջ՝ ամբոխը մոլորեցնելու և իրենց, միմիայն իրենց ողորմելի գոյութիւնը պահպանելու նպատակով:

Մտաւոր սնանկութիւնից, զգացումների ապականութիւնից ազատուելու միակ և ապահով միջոցը առողջ միտքն է, որի յաղթանակը պիտի ցանկան մեզ հետ և՝ նրանք, որոնց համար թանկ է ազգի լուսաւորութեան և բարօրութեան գործը:

Երբ մեր մէջ էլ առողջ միտք կատարեալ յաղթող հանդիսանայ, այն ժամանակ կըխորտակուին այդ նախապարհեղեղեան, այդեգիպտական կուռքերը, իբրև խաւար ժամանակների կոթողներ:

Առաջիկայ 1896 թ. «Նոր-Դար»-ին նոր բաժանորդ գրուողները կարող են «Նոր-Դար»-ի համարները ստանալ գրուելու օրից:

ՔՐՈՆԻԿՈՆ

«Արարատ»-ի մէջ կարդում ենք.

Կայսերական Տան ուրախալուի տօնախմբութիւնների առթիւ գոհացողական մաղթանքներ կատարուեցան Մայր Տաճարում: Առաջ ենք բերում այդ առթիւ փոխանակուած հեռագրները:

Ցարսկոյէ Սելո, 5 նոյեմբ. 6 ժ. 53 ր. գիշերի կէսաւուր.

Էջմիածին, առ Կաթողիկոսն Ամենայն Հայոց.

Շնորհ անկեղծ ունիմ վասն չնորհաւորելոյդ գիս: Ցանձն առնիմ ղՆորածինն աղօթից Ձերոց:

ՆԻԿՈԼԱՑ.

ՑԱՐՍԿՈՑԷ-ՍԵԼՕ, Նորին Մեծութեան Թագաւոր Կայսեր.

Վասն նորոյ հնդման չնորհացն Աստուծոյ ի վերայ Օգոստափառ Տան Մեծութեան Ձերոյ, զգացմամբ ամենախորին աձնանուիրութեան՝ ի հոգի չընորհաւորեմ զաճումն Կայսերական Գերդաստանիդ, վերառաքելով առ Տէր Աստուած ջերմեռանդն աղօթս վասն ըղձալի քաջառողջութեան Օգոստափառ Ծնողին և բարձր Նորածին Օլգա Մեծի Իշխանուհւոյն:

ՄԿՐՏԻՉ՝ Կաթողիկոս Ամենայն Հայոց:
5 նոյեմբ., 1895.

ՑԱՐՍԿՈՑԷ-ՍԵԼՕ, Նորին Մեծութեան Թագուհւոյ Կայսրուհւոյ Մարիա Ֆէօդորովնայի.

Խնդակցակալ ուրախութեան եկեղեցականաց իմոց և համայն հօտիս, առաջի առնեմ զանձնանուէրն իմ չնորհաւորութիւն վասն աւուր ծննդեան Ձերդ Մեծութեան և աղօթեմ առ Բարձրեալն, զի չնորհեսցէ Ձեզ, Ամենաբարեպաշտ Թագուհի, քաջառողջութիւն ամս յամայր:

ՄԿՐՏԻՉ՝ Կաթողիկոս Ամենայն Հայոց:
14 նոյեմբ., 1895.

Ցարսկ.-Սելո., 16 նոյեմբ. 11ժ. 40 ր. առ.

ԷՋՄԻԱԾԻՆ, Նորին Սրբութեան Մըկըրտիչ Կաթողիկոսի Ամենայն Հայոց.

Շնորհ ունիմ ի սրտէ Ձեզ, եկեղեցականաց և համայն հօտիդ վասն բարեմաղթութեանցդ:

ՄԱՐԻԱՑ.

Աքասթուման., 26 նոյեմբ., 7 ժ. 5 ր. գիշերի կէսաւուր.

ԷՋՄԻԱԾԻՆ, Մկրտչի Կաթողիկոսի Ամենայն Հայոց.

Ի սիրտ և ի հոգի չնորհ ունիմ Ձեզ վասն չնորհաւորութեան և աղօթից Ձերոց:

ԴԷՕՐԴԻ.

ԱՐԱՍԹՈՒՄԱՆ, Նորին Բարձրութեան Թագաժառանգ Կայսեր.

Ի սիրտ և ի հոգի չարհաւորեմ զօր անուանակոչութեան Ձերդ Բարձրութեան և աղօթեմ առ Միածին Որդին Աստուծոյ վասն քաջառողջութեան և բարօրութեան Ձերոյ:

ՄԿՐՏԻՉ Կաթողիկոս Ամենայն Հայոց:
26 նոյեմբ., 1895.

—

Թաւրիզի մեր թղթակիցը հաղորդում է մեզ, որ պարսից զօրքերի թուրք-պարսկական սահմանում երևալը մեծ երկիւղ է ազդել քիւրդերի վրայ, որոնք հետզհետէ քաշւում են դէպի թուրքաց երկրի ներսերը:

—

Թիֆլիսի առևտրի և մանուֆակտուրայի մանաժողովը, իւր դեկտեմբերի 16-ի նիստի որոշման համաձայն, ֆինանսների մ. մինիստրին ուղարկել է [illegible] ստացուած է մեր խմբագրատան մէջ:

«Այն պատճառով, որ Անդրկովկասեան երկաթուղու երկաթուղիը դադարած է և յայտնի չէ, թէ չուտով պիտի բացուի երկաթուղիը թէ ոչ, արտիւնաբերողներն և առևտրականները անել դրութեան մէջ են մնացել ապրանքները Սև-ծովի նաւահանգստից արտահանելու վերաբերմամբ: Վլադիկավկազի ճանապարհից օգտուելու ոչ մի հնար չկայ, որովհետև, բացի այն, որ փրախտը բարձր է և ապրանքները ծանրը, այլ և այդ ապրանքները կիտուած են մեծ քանակութեամբ, և անդադար ձեան կոյտերով ծածկուում են ճանապարհները. չկան փոխադրիչ միջոցներ, փոխադրութեան գները բարձր են և օր օրի վրայ աւելի ևս բարձրանում են: Ի նկատի ունենալով, որ կատարեալ հնար չկայ ապրանքները տեղափոխելու փրախտի գներով, որոնք չորս անգամ բարձր են նախկին գներից, առևտրի մանաժողովը պատիւ ունի ամենախոնարհաբար խնդրելու ձերդ բարձր գերազանցութեանը ժամանակաւոր ուղիղ հաղորդակցութիւն հաստատել Անդրկովկասեան երկաթուղու կայարաններից Բաղու-Պետրովսկի վրայով մինչև Սև-ծովի նաւահանգիստները, ապրանք ուղարկողներին հնարաւոր արտօնութիւններն ու զիջումները տալով, այնպիսով, որ որոշուած է ժամանակաւոր ուղիղ հաղորդակցութեամբ ուղարկուող ապրանքների համար, ըստ սակագների ժողովածուի 687-րդ յօդուածի»:

—

Ի նկատի ունենալով, որ Թիֆլիսում դիֆտերիտով, սկարլատինով և ծաղկով հիւանդանալու դէպքերը յաճախ են պատահում և հարկաւոր է վարկեան եղած տեղում բժշկական չուտ օգնութիւն հասցնել, Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը կարգադրել է, որ Շուտական բոլոր բժիշկների մօտ հեռախօս չինուի առաջիկայ տարուայ յունուարի

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՀԱՏՈՐ Ա.

A. Chah-Zadayan

(«La Revue Bémoniste», № 5, 1895 թ.)։

I.

Մեր թերթերու մէջ տեղ տեղ կը տարածուի, որ Ռուսիոյ մէջ հրատարակուելիք պատմութեան մը համար, որ Ռուսիոյ կառավարութիւնը հաւանութիւն տուած է, ամբողջ արխիւները բացուած են պատմագրին առջեւ։ Ասոնք ճիշդ չեն։ Ռուսիոյ մէջ պատմութիւն գրելու համար, ինչպէս ուրիշ ամէն բանի համար, պէտք է նախ ունենալ հաւանութիւն կառավարութենէն, որ ամէն անգամ չի տրուիր։ Ապա, երբ հաւանութիւնը տրուած է, պէտք է դիմել արխիւներու պահապանին, որ ալ ամէն անգամ չի բանար իր դռները։ Ինչ որ ալ ըլլայ, ես ունեցայ պատիւը ստանալու հաւանութիւնը, ինչպէս նաեւ արխիւներուն բանալին։ Ես ալ ամէն օր կ՚երթայի անոնց մէջ, ինչպէս կ՚երթայ մարդ իր գործին։ Ես ալ ամէն օր կը գրէի, ինչպէս կ՚ընէ մարդ իր գործին։ Ես ալ ամէն օր կը գրէի, ինչպէս կ՚ընէ մարդ իր գործին։

Ընդհանուր խնդիրներ, որոնք կը վերաբերին Ռուսիոյ պատմութեան, ինծի համար ոչ մի հետաքրքրութիւն ունին։ Ես կ՚ուզեմ գրել միայն այն մասին, որ ինծի կը վերաբերի։ Ես կ՚ուզեմ գրել միայն այն մասին, որ ինծի կը վերաբերի։ Ես կ՚ուզեմ գրել միայն այն մասին, որ ինծի կը վերաբերի։

Ես ծնած եմ Ռուսիոյ մէջ, ուր ծնած են նաեւ իմ ծնողքս։ Ես ալ ունեցած եմ իմ դաստիարակութիւնս ռուսական դպրոցներու մէջ։ Ես ալ ունեցած եմ իմ դաստիարակութիւնս ռուսական դպրոցներու մէջ։ Ես ալ ունեցած եմ իմ դաստիարակութիւնս ռուսական դպրոցներու մէջ։

րու թիւը կը հարցնէ, ինչպէս մեր քովը տիպողները կը հարցուին և համալսարանական կրթութիւն։ Առևտրագիտութիւնները չատ ցանցառ չեն, բայց չատ անգամ հարսնիայ ծախքերէն ազատելու համար՝ ծնողաց դիտակցութեամբն ու խորհրդովը կ'ըլլան, և հարսնիայ հանդիսութիւնները չատ անգամ ութ օր կը տեւեն։ Կանայք զօրաւոր և տաղանդաւոր են։ Բայց կրթութեան կոչմանէ հարիւր տարի յառաջ ունեցած աստիճանէն քայլ մը յառաջ գացած չեն։

Ոչ հարստութիւն և ոչ ազնուական տոհմ մը այս պայմանը փոխած չեն, մանաւանդ թէ հարուստներն աւելի բթամիտ են եղած։ Հարուստ և աղքատ քովդ կանայք իրարմէ կը տարբերին զգեստով և այն յատկութեամբ, որ աղքատներն աւելի սրամիտ և հանճարեղ են։ Ընդհակառակն հայ կինը մեծ յառաջադիմութիւններ ըրաւ, որուն թուականն է՝ պարսից իշխանութենէն ելլելով Ռուսիոյ իշխանութեան տակ մտնելը։ Դպրոցներ հաստատուեցան, համալսարաններ յաճախելու հրաման տրուեցաւ, հայերէն լրագիրներ և հայկական թատրոն մը հիմնուեցան։ Ամեն մտաւոր աշխատութեանց մասնակից է հայ կինը։ Թէպէտ հայ կինը թող կուտայ, որ այր մարդն ամեն ակզբնաւորութիւն ընէ, բայց այրը չուտով մասնակցութեան հրաւէր կը կարդայ, և չի կրնար ըսել «մինչև հոս և ոչ աւելի յառաջ»։ Հայ կինն երբէք այրերու սրաբանութեանց նիւթ չի կրնար ըլլալ Միւնխէնի «Fliegende Blätter» երկիծաբանական թերթը Հայոց համար չի կրնար հրատարակուիլ։

Թէպէտ հայ կինն այսչափ հրապարակի հետ չփման մէջ է, սակայն տունը կը հոգայ և կը խնամէ։ Բայց որչափ կրթեալ ըլլայ կինը, նոյնչափ աւելի յարգ կունենայ իբր տանտիկին։ Որչափ աւելի կրթութիւն, նոյնչափ աւելի սէր, որչափ մարդամանաչութիւն և փորձառութիւն, նոյնչափ ամեն բանի խելամտութիւն կունենայ կինը։ «Հասկնալ» ներել ըսել է։ Միայն տհասնականակ և ծածկամիտ կանայք չատ քիչ կըներեն։

Օրիորդ բժշկուհին չատ դժուարին կերպով պարզեց մի առ մի այն ամեն անպատեհութիւնները, որ չատ անգամ առաջ կուգան գիտնական առն և արդէն կնոջ ամուսնութենէն, և երկու ամուսիններու գիտութեան այս անհաւասարութեան պատճառաւ պակաս չեն ըլլար յարկերէն կազն ու կոխիը, ի

---

*) Թերմաներէն խեցգեաինը (Krebs) կընչանակէ նաև քաղցկեղ, և Backfisch տապակելու ձուկ, նաև չափահաս աղջիկ։ Բժշկուհւոյն դիտել ուզածն ակնյայտնի է...։

մէջ բերած քանի մը օրինակները խանդավառ ծափահարութեանց նշան տուին և ունկնդրաց կողմանէ մեծապէս հաւանութեան So ist es, so ist es «այսպէս է, այսպէս է» հաստատականները լսեցին։ «Այս յարաբերութիւններէն կը ծագի, կը շարունակէր հայ բժշկուհին, կրելով ուսս բանաստեղծին՝ իւր մէկ առակին մէջ նկարագրածը։ Անգամ մը մարդ մը ուղեց իւր կառքին լծել կատու մը, խեցգետին մը և ձուկ մը, բայց կատուը թուչելու սկսաւ, խեցգետինը դէպի ետ կը քաշէր կառքը և ձուկն ի ծով կը դիմէր։ Ինչ օգուտ՝ կը գոչէր Բէկլարեանը, եթէ այրը կատու մըն է, կինը խեցգետին և աղջիկը—ձուկ մը *)։ Ռուսական իշխանութեան տակ կնոջ զարգացումն չատ յառաջացած է։ 1880-էն ի վեր հայ աղջկունք և կանայք օտար բարձրագոյն դպրոցներն ալ կըյաճախեն։ Հիմայ 8 հայ օրիորդք կուսանին ի Դէնֆ, և 2 հատ ի Բեռն։ Բայց կանայք մասնաւոր չնորհակալութիւն մը ունին Աղէքսանդր Գ-ին նկատմամբ։ Առաջուան սովորական «ուսեալ մանկաբարձ» տիտղոսին տեղ՝ «կին բժիշկ» տիտղոսն չնորհած է, և մասնաւոր նշան մը։ Ռուսաստան բժշկուհին մեծ յարգ կը վայելէ։ Բայց Հայաստանի կանայք չեն ուսանիր՝ ազատագրուելու, արծաթ չահելու, ընտանեաց պարտաւորութիւններէն հրաժարելու համար, ոչ, այլ իրենց ցաւագար քոյրերուն օգնելու համար. և Փառք Աստուծոյ, նեղոսլայի պէս՝ հեռագրատանց, հեռաձայնատան, պանդոկներու... մէջ ծառայելու հարկաւորութիւն չունին. վաղն ղի արանց և կանանց համահաւասարութիւնը ճշդիւ պահուելով, ամեն ալ կ'ամուսնանան»։ Համառօտ կերպով յիշատակեց օրիորդ Բէգլարեան աննպաստաւոր պայմանները Տաճկաստանի հայ կնոջ, որ մահու չափ իւր գոյութիւնը պահպանելու ստիպուած ըլլալով, չի կրնար բնականապէս բարձրագոյն ուսմանց վրայ մտածել, բաց «ուսաահայ կինը բարոյական պարտաւորութիւն ունի, կ'ըսէր, այս նկատմամբ օգնութեան հասնելու իւր տանկահայ քրոջը...»։ Ու հոս կոչում կ'ընէր օրիորդն՝ երջանիկ կանանց, որ ձեռք կարկառեն իրենց դժբախտ քոյրերուն վիճակը բարւոքելու, վասնզի առանձինն վայելած երջանկութիւնը՝ կիսատ երջանկութիւն մըն է։ «Այս է բժիշկ կանանց պարտքն, ազատել կանայքն արբշռութենէ և խառնակեցութենէ»։ Սղիչէի պատմագրութենէն յառաջ բերած ազդեցիկ կտորովն և «Մշեցի աղջկան» բանաստեղծութեամբը վերջացուց օրիորդն իւր ճառախօսութիւնը։ Վարձատրութիւնն եղաւ ներկայից ծափահարութիւններն և ծաղկեայ փնջերն ու չնորհաւորութիւնները։

Օրիորդ Բէգլարեան կըդառնայ իւր հայրենիքը, ուր պիտի հաստատէ առաջին կանանց-հիւանդանոցը, որով պիտի ըլայ օրիորդն առաջին հիմնարկուն այսպիսի օգտակար հաստատութեան մը։ Թէպէտ Աստրախան՝ օրիորդ Քալանթարեանց արդէն իբր բըժշկուհի կըպաշտօնավարէ, բայց բուն Հայաստանցի չէ, այլ ի Ռուսիա ցան ու ցիր ապրող հայ գաղթական ընտանեաց մը զաւակը։ Յաջողութիւն կը մաղթենք տաղանդաւոր օրիորդին և կըբաղձանք որ եռանդուն հետևողներ գտնէ։ («Հանդէս Ամսօրեայ», դեկտ.)։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԻԱՑԻ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

—

«Ռուս. հեռագ. գործակալութիւնը» դեկ. 20 թուով, Բերլինից հեռագրում է մեզ.

«Կոլնի լրագրին» Էրզրումից հաղորդում են, որ նոյն տեղի հայոց եպիսկոպոսը, որին թուրք կառավարութիւնը համարում է հայ չարժումների պարագլուխ, ձերբակալուել և կ. Պոլիս է ուղարկուել։ Խօսում են, թէ եպիսկոպոսին կուղարկեն Նուսաղէմ։

—

Կ. Պոլսից անգլիական «Times»-ին հեռագրում են, որ գերմանական դեսպանը՝ իւր կառավարութիւնից ստացած հրահանգների հիման վրայ՝ Բ. Դրան ամենաստիպողական առաջադրութիւններ է արել՝ Զէյթունի հայերի կոտորածների առաջն առնելու նպատակով։ Գերմանական դեսպանի առաջադրութիւնները պաշտպանութիւն են գտած նաև Միացեալ-Նահանգների դեսպան պէօլ Ֆ. Կերրիի կողմից։

—

«Ռուս. գործակալութիւնը» կ. Պոլսից հեռագրում է, որ ֆրանցիսկեան չորս վարդապետները, որոնց ինչ պատահած լինելը անյայտ էր մնացած, փախել են Զէյթուն, ուր ասլատանել են նոյնպէս չատ խաղաղ ընտանիքներ հարևան գաւառից, որին վտանգ էր սպառնում։ Այս վերջին հանգամանքն էր պատճառը, որ պետականներն ստիպուած եղան միջամտելու զէյթունցոց գործերին։

—

«Նովոստի»-ի ասելով Հռոմի պապը մի կոնդակ է հրատարակել, յորդորելով, որ թուրքերը հաչտուեն հայերի հետ և պահանջուած ռեֆորմները մտցնեն։

—

«Ռուս. հեռ. գործակալութիւնը» կ. Պոլսից, դեկ. 18 թուով հեռագրում է մեզ.

«Դեկ. 15-ին, կ. Պոլսում ձերբակալուել են բազմաթիւ թուրքեր, որոնց թուումն են նաև երեք պաշտօնեայ սուլթանի թիկնապահներից մինը։ Կատարուած ձերբակալութիւնները, կարծուում է, որ կտալ ունեն անցեալ ուրբաթ օրը սելամլըի արարողութեան ժամանակ, ներկայ վալէութեան դէմ ցոյցեր անելու մտադրութեան հետ։ Ձեռք առնուած միջոցների չնորհիւ, ոչ մի ցոյց տեղի ունեցած չէ։

—

Կ. Պոլսից հաղորդում են. «5-րդ զօրաբանակի հրամանատարը հեռագրում է, որ 6,000 դրուզներ դուրս են քըշուած իրենց բռնած դիրքերից Մեզբայում, Սեդիկում և Մեդելում։ Հրաման է արձակուած չարունակել հետապնդումը»։

—

Պարիզում թուրքաց դեսպան նշանակուած է Միւնիր բէյը։

—

Վեննայից ֆրանսիական «Temps» լրագրին հաղորդում են.

«Թէպէտև Կ. Պոլսում լուրեր են չըրջում Այդնի արդի կուսակալ Քեամիլ փաչայի մօտիկ ժամանակներս իշխանութեան գլուխ անցնելու մասին, սակայն և այնպէս սուլթանի մայրաքաղաքում այժմ առաւելապէս խօսում է թուրք կառավարութեան Սպիտակոսի բարձրագոյն կոմիսսար՝ Մուխթար փաչայի Կ. Պոլի հրաւիրուելու վերաբերութեամբ։ Հաւանական է, որ վերջինիս առաջարկուի մեծ վեզիրի պաշտօնը, եթէ Քեամիլ փաչա չկամենայ իւր նախկին այդ պաշտօնին վերադառնալ, և կամ թէ Հայաստանի բարձրագոյն կոմիսսարի պաշտօնը, որի գլուխը ներկայումս կանգնած է Շաքիր փաչան»։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ԻՆ ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ» ՀԵՌԱԳՐԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԴ, 18 դեկտեմբերի. —Դեկտեմբերի 18-ին տեղս հասաւ Աբիջ փաչան, որը Թագաւոր Կայսրին բերած է սուլթանի կողմից նուէրներ և նրա ինքնագիր նամակը։

ՍՈՖԻԱ. — Մակեդոնական ժողովը փակեց իւր նիստերը, ընդունելով յանձնախմբի 12 անդամներ՝ բացի ապէս ընդդիմադիր կուսակցութեան պատկանողներից։

ՄԱՍՍՈՎԱ.—Տեղս հասաւ մի նաւ, բերելով իւր հետ զօրք։ Ռուս. հիւպատոսը իւր դրած մի նամակում յայտնում է, որ անկարելի է պատերազմելու նպատակով հաւաքուած բազմութեան այլևս զսպել։ Կասսալայի հրամանատարը հեռագրում է, թէ դերվիշները ամենայն եռանդով պահպանում են Տոմատ և Էլվաչների միջև եղած տարածութիւնը։

ՎԼԱԴԻՎԱՍՏՈԿ, 19 դեկտեմբերի (<Նով. Վր.>).—Ճապոնական կառավարութիւնը անգլիական գործարաններին ապսպրել է պատերազմական տարը նաւ։ Ճապոնական 15 փոխադրող նաւեր Չեմուլպոյից՝ Լիաթունգ թերակղզուց զօրքով հասան Թերուչիմ։ Զօրքի դադարկումը վերջանալու մօտ է։

Կ. ՊՈԼԻՍ.—Նախկին ախոռապետ Իզզէտ փաչան զինուորական դատարանի արձակած վճռի համաձայն ստիպուած է եղել և աքսորուել Մուսուլ։ Պետերբուրգի զինուորական դատարանն երեսը ծածկում է մեծ և անթափանցիկ քողով. փոքր ինչ ժամանակ անցնելուց յետոյ այդ մեծ ծածկոցի փոխարէն գործ է ածում առաւել փոքրը, կամ՝ աւելի հիշեն ասած՝ մատաքեայ թաշկինակ, որով նորահարսը ծածկում է դէմքի ստորին մասը, դուրս թողնելով միայն քթի վերի մասը, աչքերն ու ճակատը։ Նորահարսը ամուսնանալուց անմիջապէս յետոյ ոչ ոքի հետ չպէտք է խօսի, բացի իւր ամուսնուց, այն էլ ոչ ուրիշների առաջ։

Փոքր ինչ ժամանակ անցնելուց յետոյ նա կարող է խօսել տան մատաղահաս աղջիկների, իւր հասակակից կանանց, երեխաների հետ և այլն։

Նա չպէտք է իւր ամուսնու ծնողների ներկայութեամբ նստի, մինչև որ նրանք չհրամայեն։ Սակայն այս բոլոր այլանդակ սովորութիւնները, որոնք հնութիւնից մնացած, կամ թուրքերից մտած են, դաստիարակութեան և լուսաւորութեան ազդեցութեան տակ կամաց-կամաց անհետանալու վրայ են։ Կանայք իրենք արդէն սկսել են հասկանալ այդ սովորութիւնների անիմաստ լինելը, որոնց հետևելով ստիպուած էին երեսները ծածկել և լեզուները պատանձկացնել։

(Կը շարունակուի)։

Ց.

անանում են առաւել երկայն ժամանակ միջոց։

Փոքրիկի մանկութեան առաջին տարիներում, նրա կրթութիւնը ամբողջովին դոնւում է միմիայն իւր մօր ձեռքում, նա է նրան քայլել սովորեցնողը. մայրն է, որ իւր բոլոր հնարագիտութիւնը թափում է նրան քայլեր փոխել տալու և առաջին խօսքը, իւր հօր անունը, արտասանել տալու, որից յետոյ, աշխատում է ուրիշ բառեր ու նախադասութիւններ ևս սովորեցնել։

Այսպէս ուրեմն նորածինը իւր աչխարհ գալու օրից սկսած մինչև հօթը կամ ութը տարեկան հասակը, գրեթէ բողջապէս յանձնուած է իւր հարազատ մօր խնամքին։ Դրանից յետոյ, որքան նա մեծանում, այնքան ընտանիքի սեփականութիւն է դառնում, այսինքն, թէ նա միայն մօրը չէ պատկանում, այլ պատկանում է նոյն յարկի տակ բնակուող ընտանիքի բոլոր անդամներին։ Փոքրիկ հայուհին ութը կամ տասը տարեկան հասակից արդէն սկսում է իւր տարիքի և այժմ ներած գործերը կատարել և զբաղւում է ընտանեկան մանր գործերով, իսկ մնացած ժամանակը զուարճանում է դառների, ոչխարների և իւր խաղալիքների հետ ժամանակ անցկացնելով, երբեմն ևս գնում է իւր հասակակից դրացի աղջիկների հետ խաղալու։

12—15 տարեկան հասակը մտնելուց յետոյ նա այլևս համարւում է մանկամարդ աղջիկ, և սահանալով լուրջ և խոհուն դիրք, գառների ու ոչխարների հետ ժամանակ անց կացնելու փոխարէն ձեռք է առնում տոհմ, թել, մկրատ, կարում կամ դանազան բաներ է հիւսում։

Ամենայն եռանդով աշխատում է կարուձևութեան սովորել, նմանապէս և խոհանոցի վերաբերեալ գործեր ու տնտեսութիւն, մի խօսքով, ամեն բանից առաջ նա աշխատում է պատրաստուել կին դառնալու։

Գալով մայրին դաստիարակութեան, դժբաղդաբար պարտաւորուած ենք հաստատել, որ հայ գիւղերը բոլորովին զուրկ են այդ կողմից։ Գիւղական աղջկանց ուսումնարանները, գոնուած դէպքումն ևս, այն աստիճանի վրայ կանգնած չեն, ինչ աստիճանի վրայ որ գտնուում են աղայոց ուսումնարանները։ Կանոնաւորուած դպրոցները դեռ ևս մուտ գտած չեն մեր գիւղերում, ուսոի հայ մանկամարդ աղջիկը իւր ծնողների համաձայնութեամբ պարտաւորուած է իւր դաստիարակութիւնը յանձնելու գիւղական քահանային կամ իւր ազգականներից մէկին, և գիւղական հայ աղջկայ ուսումնարանական կրթութիւնը չատ յաճախ գրել-կարդալուց այն կողմ չի անցնում։ Ահա այս մեծ թերութեան դէմ է, որ տասնև հինգ տարիներից ի վեր զանազան ընկերութիւնները մաքառելով, աշխատում են հայ գեղջկուհիներին մատակարարել այն կրթութիւնը, ինչ որ տրւում է քաղաքացի օրիորդներին։ Մենք ուրիչ չատերի հետ միասին յոյս ունինք, որ մօտիկ ապագայում կրթութեան տեսակէտից գիւղերն կարող կըլինին հաւասարուել քաղաքներին, և թէ այն ժամանակ կնոջ ազդեցութիւնը առաւել մեծ ու իրական կըլինի, քան թէ է ներկայումս։

Մինչ այս մինչ այն, աղջկայ ամուսնութեան ժամանակը հասնում է։ Իսկ այդ նշանաւոր մի գործ է համարւում հայոց մէջ։ Այն երիտասարդը, որը կամենում է իւր բաղդը կապել մի աղջկայ հետ, ամեն բանից առաջ իւր ազգականներից մէկի միջոցաւ պարտաւոր է այդ մասին առաջարկութիւն անել աղջկայ մեծ-մօրը, եթէ չունի, ուղղակի նրա մօրը։ Մեծ-մայրը կամ մայրը այդ մասին հարցնում է իւր աղջկան. վերջինս համաձայնութիւն տուած դէպքում ամուսնութիւնն արդէն կայացած պէտք է համարել, և մնում է միայն հալսանիքը կատարել։

Մեր ուսումնասիրութիւնը կատարեալ անելու համար, դեռևս առաջ չգնացած, հարկ ենք համարում մի թեթև հայեացք ձգել հայկական ամուսնութեան անցեալի վրայ։ Շատ ժամանակ չէ, որ ծնողները սկսած են իրենց աղջիկները ամուսնացնել նախապէս այդ մասին նրանց համաձայնութիւնը առնելով։ Առաջ յաճախ պատահում էր, որ խօսեցեալը տեսած անգամ չէր լինում իւր հարսնացուին և վերջինս իւր խօսեցեալին, և ամուսնութիւնը բացարձակապէս կատարւում էր միմիայն ծնողների համաձայնութեամբ։

Սակայն, բարեբաղդաբար, այդ այլանդակ ու տարօրինակ սովորութիւնը սկսել է կամաց-կամաց վերանալ, որը չատ դժուար է միանգամից արմատախիլ անել՝ առանց գիւղացու զգացումները վիրաւորելու։ Այժմ, վերջապէս, սկսում են պարզ կերպով տեսնել ու հասկանալ, որ ամուսինը աղջկայ համար է և ոչ թէ նրա ծնողների համար, ուրեմն և անհրաժեշտ է նրա համաձայնութիւնն առնել այդ մասին։

Ամուսնութիւնից յետոյ, Հայաստանի մէջ քանի կողմերում հարսը մինչև ժա-

ծակալ Ազիզ բէյը յանձնուած է զինուորական դատարանին։

ԼՈՆԴՈՆ.—(«Նով. Վրեմ.»).—Անգլիացիները, տեղափոխուելով Տրանսվաալի հասարակապետութիւն, յեղափոխութիւն են պատրաստում հասարակապետութիւնը անգլիական գաղութի վերածելու նպատակով։ Հասարակապետութեան կառավարութիւնը զօրք է գումարում անգլիացիների նպատակների իրագործման առաջն առնելու համար։ Անգլիացիները խնդրամատոյց են եղել Կապի գաղթականութեան իրենց պաշտան կանգնելու Տրանսվաալի հասարակապետութեան նախագահը Բերլին է ուղարկել դր. Լոյդսին, Վիլհելմ կայսրի պաշտպանութիւնը խնդրելու համար։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Դեկտեմբերի 19-ից.

Վաքսէլի կուրս 3 ամսով.

Լոնդոնի վրայ	10 ֆ	ստ. 93,90
Բերլինի վրայ	100 մարկ	45,75
Պարիզի վրայ	100 ֆր.	» 37,15

Վաքսէլի կուրսի տրամադր. խազազ է։

Նոր կտրած պոլտինկաներ		7,50 – 7,50
Մաքսային կուպ. (100 ր. մետալով)		149 — 150
Բորսային վեղը		6¼ – 7¼-ից %
4% Պետակ. արժեթղթ.		97¼ սակ.
5% սակ. արժեթղ. 1884 թ.		գն.
% Առաջ. նեղքին փոխ. խազատամս 1864 թ.		284 սակ.
5% Երկր. նեղք. փոխառ. խազատամս 1866 թ.		239½
Ազնուակ. հող. բանկի գրաւակ. խազատամս		206¾
5% Պետակ. երկաթուղ. արժեթուղթ		100
4% Նեղքին փոխ. I սեր.		97½
» » » II »		97½
» » » III »		97½
» » » IV »		97½
4½% փոխ. 1893 թուի		100¼
» » փոխ. 1 հրատարակ.		99¼
» » փոխ. 2 հրատարակ.		99¼
4½% Գրաւակ. արժեթղթ. ազն. հողային բանկի		99¾
4½% Գիւղական հողային բանկի վկայաթղթեր		100
5% Ս. Պետ. քաղ. վ. ընկ.		100¼
» » Մոսկուայի		100¾
5½% Պետեռայի		99½
5% Թիֆլիսի		98 գն.
5½ Գրաւակ. արժէթղ. հող. բանկերի Խարկովի		100¼
» Պալտաւայի		99¾
» Տուլայի		100½
» Կիևի		100¾
» Մոսկուայի		100¼
» Բեսարաբիայի		99¼
» Նեղքին-Սամարայի		100
» Դոնսկոյ		99¼
» Վիլենսկի		100
6% Թիֆլիսի կալ. բանկի		101 ր. վաճ.
5% » » »		98 գն.
% Ռուբայիսի կալ.բանկ.		101 ր. վաճ.
5%% » » »		99 գն.

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ
Հինգշաբթի, դեկտեմբերի 21-ին հայ դերասանական ընկերութիւնը
բարեհաճ մասնակցու Տիկամբ ՋՄՇԿԵԱՆ
ամուսիններուն և պ. Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆԻ

Յօգուտ Հայոց Հիւանդանոցի Բոլշոյ Ընկերութեան

Կը ներկայացնէ

ՊԷՊՕ

Կոմեդիա 3 գոր. հեղ. Գ. Սունդուկեանի։
Տեղերի գները աւելացուած են։
Սկիզբը 8 ժամին։
Ի ե֊ժիսոր Ց. ԱԲԵԼԵԱՆ։
1—1

Ի. Ֆ. ԼՈԿԿԵԻ
ՏԵԿՍԹԻԼԱԳՈՐԾԱՐԱՆԸ ԿԱԶԸՆՈՒՄ
առաջարկում է նոր ձևի
ԳԻՆԻ ԵՒԱՑՆՈՂ ՏԱԿԱՌՆԵՐ փակ
դրութեամբ հեռացնելու համար
ՏԱԿԱՌՆԵՐ, ՉԱՆԱՆԵՐ և առհասարակ
ամեն տեսակ ամաններ գինու և գարեջրի
համար
Հասցէն նամակների և հեռագրերների
համար՝ Локке, Казань.
(М.) 16—14.

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Ուրբաթ, դեկտեմբերի 22-ին, լինելու է
ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ
Դիմակների համար տոմսակները տրւում են ժողովարանի գրասենեակում։
(384) 2—1



Фабрика піанино А. КОПЪ
(Михайловская, № 132-й).
Продаются піанино изъ лучшихъ мѣстныхъ и заграничныхъ матеріаловъ на металлисхикъ доскахъ съ перекрестными рунами. Отпускъ піанино на прокатъ. Пріемъ инструментовъ въ починку.
(367) 50—27

ԼԱՒ ԲԱՆ *սիրողներին* ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է
ԳՈՒՅԻ «ՄՐՓՈ»—ԼԻՈՆ ՊԷՄՅԱՏՈՆ ԵՒ Ա ՀԱՄՃԱԼԻ ՀՈԳՈՎ։
ՄՐՓՈՆ «ՄՐՓՈ» պարտական հոգով Ա
Ս. Պ. Բ. ՏԵԽՆՈ-ԽԻՄԻԱԿՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
Գլխաւոր պահեստները—С. ПЕТЕРБУРГЪ, Александр. площ. 9. МОСКВА, ВАРШАВА.
(М. 7—3.

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

խորհուրդը յայտնում է ընկերութեան անդամներին, որ ամսոյս 23-ին, շաբաթ օրը, երեկոեան ժամը 7-ին, քաղ. խորհրդի գահլիճում նշանակուած է ընկերութեան անդամների ընդհանուր ժողով, որի պարապմունքի առարկաները լինելու են.—1) Ընկերութեան 1894 թուի ընդհանուր, այն է՝ կենտրոնի ճիւղերի հաշուի քննութիւնը և հաստատութիւնը. 2) Վերաստուգող յանձնաժողովների զեկուցագրերը խորհրդի և ճիւղերի հաշիւների մասին և խորհրդի ու տեղական վարչութիւնների տուած բացատրութիւնները. 3) Ախալցխայի տեղական վարչութեան յաւելուածական նախահաշիւը 1895 թ. համար։

Ընկերութեան 1895 թ. տեղեկագիրը տպագրուած լինելով, անդամները կարող են ստանալ ձրիաբար մի մի օրինակ խորհրդի գրասենեակից (Սերգեևսկայա փողոց, տուն Ալիխանեանի, № 16)։
(720) 3—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՂ. ՔՄԱՍՆԻՈՒԹԻՒՆ ՆՇԱՆԱԿՈՒԱԾ ԲԺՇԿՆԵՐԻ ՀՐԱՊԱՐՆԵՐԸ

I և II քաղաքամաս.	Վ. Մ. ԱՐԾՐՈՒՆԻ, Գոլ. պրոսպ., տ. Ադամեանցի № 28.	
	Ն. Գ. ԿԱՍՈՒՄՈՎ, Միքայէլեան փ., տուն Պիրի № 118.	
	Մ. Ա. ՄԻՐԱԿՈՎ, (ժամանակաւոր) Դէյդենովսկայա փ. սեպ. տ. № 21.	
III-IV և V քաղաքամ.	Կ. Ա. ԴՈՆԻԵՒ, Սադովայա փ. սեպ. տ. № 19.	
VI քաղաքամ.	Գ. Բ. ՏԷՐ-ԱՍԱՏՈՒՐՈՎ, Վորոնցովսկայա փ. տ. Եգիգարովի № 55. Բուժարանի շինութիւն։	
VII քաղաքամ.	Գ. Գ. ԳՈՒԼՈՒԼԵԱՆՑ, Կախէթինսկայա փ., տ Տէրտէրովի, № 26. Բուժարանի շինութիւն։	
VIII և IX քաղաքամ.	Գ. Ա. ԹԱՐԽԱՆՈՎ, Ելիզավետ. փ. տ. № 70.	
X քաղաքամ.	Գ. Ա. ԳԵԴԱԼԻՆ, Միքայէլեան և Կոչուբէևսկայա փողոցների անկիւն, տ. Ուլանցևի № 2.	
Բժշկ-դեզինֆեկտոր	ԵԱ. Ա. ՌԱԶԱՄԱՏ, Սոլոլոկսկայա փ., տ. Սումբաթովի № 1.	

(382) 3—2.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ։

Ընկերութիւնս՝ որ հիմնուած է քաղաքիս մէջ ընթերցանութիւնը ծաւալելու և աղքատիկ հայ ուսանողաց դաստիարակութեան նպաստելու նպատակով, պատիւ ունի ծանուցանել, թէ իւր ընթերցարանի բացման ձեռնարկած է. հետևաբար, կը փութայ յայտարարել բարեսէր ազգայնոց, թարգմանչաց և հեղինակաց, թէ ամենայն սիրով և մեծաւ շնորհակալութեամբ կընդունի իրեն եղած ամեն գրական նուէրները։

Ընկերութեանս հասցէն է՝ S-té. Arm. des amis de la lecture. Caire (Egypte)
5—4

ՄԱՏԵՆԱԴՐԱԿԱՆ
Որսորդ Բաղդօն. Պ. Պոօշանց
Ցիչատակարան մեռեալ աւանից. Փ. Թօստօեւսկի.
Գլուխ Ը., Նորանոր ծանօթներ—Պետրով, Վճռական մարդիկ.—Ղուկաս, սայ

Լոյս տեսաւ «ԱՐԱՔՍԻ»-ի 1895 տարեշրջանի առաջին գիրքը այս Բովանդակութեամբ.

ՄԻՒԱՆԻ ԹՕՄՔ
Խմբագրութենից. . . . .
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ
Հայկական բարեներոդումների առթիւ.—Ս. Դուլամիրեանց։
Կիլիկիոյ մէջ ազգային դպրոց հիմնելու առթիւ.
Ռուս մամուլի մասին Հայկական խնդրի նկատմամբ.
Հայկական խնդիրը Անգղիայում. Բակուրան։
Մի տեսութիւն Հայկական Կիլիկիոյ հարցաստութեան վերայ։ Բակուրան։
ՏԵՂԱԳՐԱԿԱՆ
Սասուն, նրա նկարագրութիւնը, բնակիչները և նոցա բարք ու վարքը։
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
Իմ Փէրլին. Աւետիք Իսահակեան։

Ֆօմիչ. Բաղնիս. Բակուշինի պատմութիւնը, Սկիզբը տես «Արաքս»-ի նախորդ գրքի (կը շարունակուի).
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
Իգիթ Սարդար. Ա. Խահակեան։
Սասուն. Գ. քահ. Մկրտումեանց։
Իմ հայրենիքը. Ա. Հոբանեանց։
Ծանր թախիծ. Ո. Անոփեան։
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ
Ի Տէր հանգ. Մկրտիչ կաթողիկոս Կիլիկիոյ։
Ամեն. Տ. Գրիգորիս եպ., նորընծաիր կաթողիկոս Կիլիկիոյ.
ՄԱՏԵՆԱԹՕՕԱԿԱՆ
Հայկական ճգնաժամն ի Թիւրքիա. 1894-ի կատարածը, նորա նախընթացները։
Նչանակութիւնը. Գր. Տ. Գրին։
ԱԶԳԱՑԻՆ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ
Ի Տէր հանգ. Ներսէս պատր. Վարժապետեանի կտակը
Թղթակցութիւն Կ. Պոլսից. Արմաւիր։
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ
Բանաստեղծի վիճակը. Բաֆֆի։
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ
Վերջին անցքերի մասին։
Չհաթըրի միթինկը և Գլադստոնի ամբողջ ճառը։
Սուլթանի հրովարտակը հայկական բարենորոգումների մասին։
«Ազդարար»-ի հաւատամքի յիշատակին. Էմիր։
«Հիւսիս» լրագրի առաջին համարի առաջին երեսը։
Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսը Պետերբուրգում։
Գեր. Հ. Աբսէն արքեպիսկոպոս Այտնեան։
ԱՇԼ ԵՒ ԱՇԼՔ
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ
Պատկերների մասին. Լ. Մ.

«ԱՐԱՔՍԻ» ԱՅՍ ԳՐՔԻ ՆԿԱՐՆԵՐԸ

ԲՆԱԳՐՈՒԹԻՒՆ

1. Նորին կայսերական Մեծութիւն Նիկողայոս Բ.
2. Նորին կայսերական Մեծութիւն Ալէքսանդրա Ֆէօդորովնա։
3. Ամեն. Մաթէոս պատրիարք Իզմիրլեան։
4. Անգղիացի հիւպատոսի վրանները Բակուում։
5. Մուշ քաղաք։
6. Ամեն. Տ. Մկրտիչ կաթողիկոս Կիլիկիոյ։
7. Սիս քաղաք և բերդ։
8. Ամեն. Տ. Գրիգորիս եպիսկ. Ալէքսեեան։
9. Վ. Գլադստոն
10. Չհաթըրի միթինկը օգ. 6-ին։ Գլադստոն արտասանում է իւր հռչակաւոր ճառը տաճկահայոց օգտին։
11. Ջոն Բրայս, հայասէր առևտրական։
12. Սասունցի հայ։
13. «Սէյմ ձէյմ» սրահում, մայիսի 7-ի մեծ միթինկը։ Արգայլի Դուքսն խօսում իբրև նախագահ։
14. Սոլիսբըրի, արդի նախարարապետ Անգլիոյ։
15. Հայկական խրճիթ Թատուանում։
16. Քէնտըրպըրըի արքեպիսկոպոսը։
17. Եօրքի արքեպիսկոպոսը։
18. Ռօզպըրի, նախկին նախարարապետ։
19. Ռիմպըրլի, նախկին նախարարապետ։
20. Ուէստմինստըր դուքսը։
21. Ճոն Ռոբինզոն, խմբագիր «Դեյլի Նէ֊ուզ» լրագրի։
22. Վեհափառ Հայրապետի հանդիսաւոր ելքը Պետերբուրգի եկեղեցուց մայիսի 25-ին։
23. Վեհ. Հայրապետը Թիֆլիսից մեկնում է Բաթում։
24. Տ. Տ. Մկրտիչ Ա. Կաթողիկոս ամենայն հայոց.
25. Նորին Վեհափառութեան հանդիսաւոր ելքը Նոր-Պետերգոֆի կայարանը դէպի կայսեր. պալատը։
26. Վեհափառի կառքը ճանապարհին դէպի կայսերական պալատները։
27. Վեհափառը կայսերական պալատներից մեկնելիս։
28. Վեհափառը Պետերբուրգի եկեղեցու դաւթում.
29. Գեր. Արսէն արքեպիսկոպոս Այտնեան։
30. Ջեօլէքճանի երգեցիկ խումբը։
31. Կարինցի հայ աղջիկը։
32. Զէյթունցի։
33. Հայ գեղեցկուհի։
34. Բջնու բերդի աւերակները։
35. Աշտարակ գիւղի կամուրջը։
36. Տեսարան Կիլիկիոյ։

ՏԵՍԱՐԱՆՆԵՐ ԵՒ ՏԻՊԵՐ

37. Հին-Ջուղայի աւերակները Արաքսի եզերքում։
38. Կառուց անուանի ընդհանուր տեսարանը։
39. Հայ ուխտաւորների նաւակը Վանայ ծովում, Աղթամարի եզերքում.
40. Արգինայի ձորը։
41. Դաւիթ բէգի բերդը։
42. Նախիջևայ վանքի ուխտաւորների փախուստը Արաքս գետի վրայով 1791 թ.
43. Թորթումի քարափը։
45. Ախալցխացի հայ կինը։
44. Ալէքսանդրապոլցի հայ կինը։
46. Երևանցի հայ կինը։
47. Սևանայ ծովը։
48. Սևանայ ծովի մի մասը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

49. Որոտնայ վանքը։
50. Հայկական հին խաչքար։

ԴԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

51. Մուրիյհօ.—Ցղումն ս. Աստուածածնի։
52. Ց. Այվազովսկի.—Ալանդական ովկիանոս։
53. Հ. Սեմիրադսկի.—Աղբիւրի մօտ։
54. Զիխել.—Զրքիր ֆելլահ կին։
55. » —Աղքատ երաժշտուհի։
56. Բիսսոն.—Սպասում է։
57. Ժ. Օբէր.—Ամուռը (սիրոյ Աստուածը) արձակուրդում։
58. Ռէյնոլդ.—Հրեչտակների մի խումբ։
59. Զիւս.—Առաջին սէր։
60. Գ. Տէր-Աստուածատրեանց.—Հայ կինը աղբիւրից դառնալիս։
61. » Մշեցի հայ երկրագործը դաշտում։ 152
62. Գր. Գաբրիէլեանց.—Հայ աչուղը։ 118
63. » Անէոյ պարիսպը լուսնեակ գիշեր։
64. » Հայկական սայլ.

«ԱՐԱՔՍ» ի բաժանորդագինն է 3 ռուբլի։ Դիմել Պետերբուրգ այս ապահով հասցէով. Петербургъ, Симеону Гуламирянцъ. 2—1

ՀԱԽԼԱԲԱՐ
ԿԱԽԵԹԻՆՍԿԱՅՍ. ՀՐԱՊԱՐԱԿ, ՉԵՐՔԵԶՈՎԻ ՏՈՒՆ, № 3։
Այս տարուայ դեկտեմբերի 23-ից բացւում է առաջնաբոյժ
Օ. Ս. ԻՆՉՄԵՆԻ **ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆԸ**
3—3

Типисъ Доз. Цензурою 20-го Декабря 1895 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр. А. О. Меликъ-Шахназаріанца Воронц. Набережн. Церковный дом